ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
2014-15 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը հաշվետու ժամանակաշրջանում իր գործունեությունն իրականացրել է՝ ղեկավարվելով ԵՊՀ գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներով ու հանձնարարականներով, ինչպես նաև ելակետ ունենալով մասնաճյուղի՝ 2011-15թթ. ռազմավարական ծրագրի դրույթները: Դրանք մասնավորապես նպատակաուղղված են եղել մասնաճյուղում բարձրորակ կրթության տրամադրմանը, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխմանը, հանրային ներգրավման և ծառայությունների զարգացմանը, կադրային ներուժի կատարելագործմանը և այլն:

2014-15 ուստարում մասնաճյուղում իրականացվել են առկա ուսուցման 12 և հեռակա ուսուցման 11 բակալավրի կրթական ծրագրեր: Տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան իրականացվել է մասնագիտությունների ճշգրտում: Առաջնորդվելով ԵՊՀ մեթոդական ուղենիշներով՝ ֆակուլտետներում վերանայվել և բարելավվել են, իսկ նոր մասնագիտությունների համար կազմվել են կրթական վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրեր, լրամշակվել են ուսանողների համար նախատեսված «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և դասընթացների տեղեկագիրքը»:

2014-15 ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 11 մասնագիտությունների գծով ընդունվել է 161 ուսանող (38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ 217 դիմորդ: Նշենք, որ հեռակա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 27-ով գերազանցում է նախորդ ուստարվա ընդունելությանը, իսկ առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 44-ով պակաս է նախորդ ուստարվա ընդունելությունից:

Քանի որ մասնաճյուղի դիմորդների 90%-ից ավելին կազմում են Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտները, մասնաճյուղը շարունակաբար ընդլայնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ՝ նպատակ ունենալով ոչ միայն պահպանել, այլև ընդլայնել ընդունելության համակազմը: Մասնաճյուղի զարգացման ռազմավարական այդ առանցքային դրույթներից մեկի իրականացման համար մարզում մասնաճյուղի «Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման» բաժնի կողմից կատարվել են ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ աշխատանքներ: Մասնաճյուղն ունի պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 30 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 1000 աշակերտների հետ: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ են կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ յուրաքանչյուր ուսումնական տարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին կազմակերպվել են բաց դռների օրեր: 2014թ. հոկտեմբերից Կիրառական արվեստի ֆակուլտետում «Գծանկար»,

«Գունանկար», «Կոմպոզիցիա» առարկաներից իրականացվում են նախապատրաստական դասընթացներ: Դիմորդների հավաքագրման գործընթացում կարևոր նշանակությունն ունեն հանրակրթական տարբեր առարկաների գծով ԵՊՀ-ի հետ համատեղ կազմակերպվող օլիմպիադաները: 2014-15 ուստարում դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար կազմակերպված օլիմպիադաներին մասնակցել են մարզի 4 ավագ, 54 միջնակարգ դպրոցների և 2 վարժարանների շուրջ 320 աշակերտներ, տարբեր պարգևատրումներ են ստացել 46 աշակերտներ, որոնցից 6-ը՝ 2-րդ, 9-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ:

Գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպությունների են տրամադրվել ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը, մասնաճյուղի (2014թ.), կիրառական արվեստի ֆակուլտետի (2014թ.) և հեռակա ուսուցման բաժնի (2015թ.) գովազդային բուկլետները:

Հաշվետու ուստարում մասնաճյուղում բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորել են 1531, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ 4 ուսանողներ, որոնցից 1415-ը՝ վճարովի ուսուցման համակարգում: Հաշվետու ուստարում մասնաճյուղը բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ շրջանավարտներ չի ունեցել: Մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ տվել է 4 շրջանավարտ, իսկ հեռակա ուսուցմամբ՝ 188 շրջանավարտ: 2015թ. մասնաճյուղը բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ և մագիստրոսի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ գերազանցության դիպլոմով շրջանավարտներ չի տվել:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի միջոցով մասնաճյուղն իրականացնում է շրջանավարտների ապագա զբաղվածության գործում իր աջակցությունն ապահովող մի շարք միջոցառումներ: 2015թ. հունիսին մասնաճյուղի մի շարք ակտիվ շրջանավարտների հետ կազմակերպվել է հանդիպում, որի նպատակն էր «Շրջանավարտների միություն» հասարակական կազմակերպություն ստեղծելը: 2015թ. հունիսին Իջևանի ԶՏԿ-ի կողմից կազմակերպված աշխատանքի տոնավաճառում մասնաճյուղն ունեցել է իր տաղավարը և ընդունել է բազմաթիվ հայտեր: Նույն ժամանակ ստեղծվել է մասնաճյուղի «Կադրային բանկ», որտեղ գրանցված շրջանավարտներին հնարավորություն կտրվի մրցութային կարգով համալրելու մասնաճյուղի դասախոսական, վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմը: Կենտրոնի աջակցությամբ շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների, որոնց շնորհիվ մեկ տասնյակից ավելի շրջանավարտներ ընդունվել են աշխատանքի:

Պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 82 ուսանող: Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 115 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 7 ուսանող: 1-ին կիսամյակում զեղչվել են առկա ուսուցման համակարգի 29, հեռակա ուսուցման համակարգի 76 ուսանողի ուսման վարձավճարները, 2-րդ կիսամյակում՝ համապատասխանաբար 58 և 107:

Ուսումնական գործընթացի բարելավման և արդյունավետ կազմակերպման համար մասնաճյուղում պարբերաբար գնահատվում է լսարանային ֆոնդի և ուսումնագիտական

լաբորատորիաների վիճակի համապատասխանությունը կրթական ծրագրերի իրականացման պահանջներին: Հաշվետու ուստարում կատարվել են լսարանների, արվեստանոցների, լաբորատորիաների և այլ ուսումնական տարածքների տեխնիկական վերազինման և վերանորոգման աշխատանքներ: Կատարվել են շուրջ 1760 ք.մ. վերանորոգման աշխատանքներ, վերանորոգվել են 16 լսարաններ, վերակառուցվել է ջեռուցման համակարգը և այլն:

Մասնաճյուղն իր գործընթացների արդյունավետ կազմակերպման համար ուսանողներին, դասախոսներին և ուսումնաօժանդակ անձնակազմին ապահովել է բավարար տեխնիկական միջոցներով: Հաշվետու ուստարում մասնաճյուղն ունեցել է հետևյալ ուսումնական ցուցանիշները՝ 76 լսարան, համակարգչային 4 սրահ, 1 լաբորատորիա, 12 արվեստանոց, պրոյեկտորով համալրված 3, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան: Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են եղել 50 տպող սարքերով (26 բազմաֆունկցիոնալ, 22 տպիչ և 2 գունավոր բազմաֆունկցիոնալ):

Մասնաճյուղում գործում է ներքին համակարգչային ցանց, որը միավորում է մասնաճյուղի համակարգիչների մեծ մասը (130 համակարգիչ), 2 Wi-Fi անկյուն և նույն հնարավորությամբ նիստերի դահլիճ:

Մասնաճյուղի կրթական գործընթացում լիարժեք ներդրվել և շարունակվում է «Դասընթացի փաթեթ»-ների (պորտֆոլիոների) կազմման գործընթացը: Դրանց միջոցով դասախոսներն իրականացնում են դասընթացի պլանավորում, նրա արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նյութերի հավաքագրում, ներկայացնում են ուսանողների գնահատման ռազմավարությունը, չափանիշները, գնահատում են դասավանդողի և ուսումնառողի համատեղ ձեռքբերումները, կատարում առաջարկներ դասընթացի հետագա բարելավման ուղղությամբ:

Առաջնորդվելով ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգով, կրթության որակի բնագավառում իր քաղաքականությամբ՝ մասնաճյուղը ձևավորել է որակի ներքին ապահովման իր կազմակերպական կառուցվածքը: Մասնաճյուղում որակի ներքին ապահովման և որակի մշակույթի ձևավորման գործընթացներն իրականացնում է Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը, որը մշակում և ներդնում է որակի ներքին ապահովման անհրաժեշտ մեխանիզմներ, ապահովում և համալրում համապատասխան փաստաթղթային հիմքերը (քաղաքականություններ, կարգեր, կանոնակարգեր, ձևաթղթեր), մշտական խորհրդատվություններով աջակցում բոլոր ենթակառուցվածքներին և խթանում որակի շարունակական բարելավումը:

Բաժնի 3 աշխատակիցներ մասնակցել են ՈԱԱԿ-ի կազմակերպած «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներին և 2014թ. դեկտեմբերին ստացել Որակի ապահովման գործընթացի աջակցի հավաստագիր:

Կարևորելով իրականացվող կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության գործոնը՝ հարցումների և հանդիպումների միջոցով իրականցվել են տարբեր ուսումնասիրություններ: Հաշվետու ուստարում վերանայվել են մասնաճյուղում գործող մի շարք հարցումների հարցաշարերը: 3 նոր հարցումների համար

գրվել են համապատասխան կանոնակարգեր, հարցման գործիքի անձնագրեր, մշակվել հարցաշարեր: Հաշվետու ժամանակահատվածում ՄԿՈԱ բաժինը ՄԿՊԿ բաժնի, ֆակուլտետների դեկանատների և ամբիոնների աջակցությամբ իրականացրել է 9 հարցումներ: ՄԿՈԱ բաժնի աշխատակիցների կողմից հարցումների արդյունքների հաշվառման և մշակման համար գրվել են 9 տեղեկատվական համակարգեր՝ բազաներ, որոնց միջոցով իրականացվել են հարցումների արդյունքների վերլուծություններ: Հարցումների արդյունքների վերլուծությունները տեղադրվել են մասնաճյուղի էլեկտրոնային կայքի «Կրթության որակի կառավարում» բաժնի «Հարցումների արդյունքներ» ենթաբաժնում: Մշակվել է արտաքին և ներքին շահակիցների առաջարկություններից ու դիտողություններից կազմված փաթեթ, որը տրվել է համապատասխան ստորաբաժանումներին՝ իրենց գործունեության հետագա նպատակային պլանավորման համար:

Համալրվել են մասնաճյուղի գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ 2009-15), որոնցում ներկայացված են մասնաճյուղի վերջին 5 տարիների գործունեությունը, ձեռքբերումները, դրանց վերլուծությունները և ինքնագնահատումները:

Հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում դասավանդել են հիմնական և համատեղությամբ 113 դասախոսներ, այդ թվում՝ 3 պրոֆեսոր (2.7%), 33 դոցենտ (29.2%), 45 ասիստենտ և 32 դասախոս (68%), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 54 թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը հասել է 50%-ի: Մասնաճյուղում դասախոսների միջին տարիքը 48 է. մինչև 35 տարեկան դասախոսների թիվը 26 է (23%), 36-65 տարեկան՝ 79 (70%), 65-ից բարձր՝ 8 (7%): Կանայք կազմում են հիմնական դասախոսական կազմի 53.2% -ը (54):

Էրիվ հաստիքային համարժեքով ուսանող-դասախոս հարաբերակցությունը 2014-15 ուստարում կազմել է 19.33 (նախորդ ուստարում՝ 20.54):

Դասախոսների միջին տարեկան ուսումնական բեռնվածության համահամալսարանական միջինը հաշվետու ուստարում կազմել է 811.8 ժամ (նախորդ ուստարում՝ 770 ժամ):

Դասախոսների (հատկապես երիտասարդ) գիտամանկավարժական և մասնագիտական գործունեությունը գտնվում է մասնաճյուղի տնօրենության ուշադրության կենտրոնում: Աջակցվում և խրախուսվում են նրանց ինքնակրթության և ինքնազարգացման բոլոր դրսևորումները (գործուղումներ, վերապատրաստման դասընթացներ, պարգևատրումներ և այլն): Կարևոր ռազմավարական խնդիրներից մեկի իրականացման համար 2014թ. հոկտեմբերի 17-ի գիտական խորհրդի որոշմամբ ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն: Վերջինիս գործունեության նպատակն է զարգացնել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներմասնաճյուղային մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը: Կենտրոնի կազմակերպած դասընթացները միտված են երիտասարդ դասավանդողների որակավորման բարձրացմանը, դասավանդման մեթոդիկայի կատարելագործմանը, ուսումնական գործընթացում կրթական նորագույն

տեխնոլոգիաների կիրառմանը: 2015թ. ստեղծվել է Անգլերեն լեզվի ուսուցման կենտրոնը, որտեղ մասնաճյուղի դասախոսներն անվճար հիմունքներով սովորում են անգլերեն լեզու:

2015 թվականից մասնաճյուղը հաստատել է սկսնակ դասավանդողների մենթորության իր քաղաքականությունը: Երիտասարդները պարբերաբար մասնակցում են փորձառու դասախոսների դասերին կամ նրանց են հրավիրում իրենց դասերին: Հաշվետու ուստարում աջակցման կենտրոնի կողմից երիտասարդ դասախոսների համար կազմակերպվել են դասավանդման մեթոդների, դասընթացների արդյունավետ վարման, ուսանողների ձեռքբերումների գնահատման, տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառման վերաբերյալ դասընթացներ:

Աջակցման լավագույն միջոց է մասնաճյուղի «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները: Հաշվետու ուստարում հրատարակվել է 2 ժողովածու, որոնցում ընդգրկված 57 հոդվածներից 21-ը մասնաճյուղի հիմնական դասախոսների հոդվածներն են: Հարկ է նշել, որ ավելացել է այլ հեղինակների (մասնաճյուղում չաշխատող) հոդվածների քանակը, ինչը կարող է վկայել ժողովածուի վարկանիշի բարձրացման, մասնաճյուղի և նրա գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածման մասին:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի 1 դասախոս պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, 7-ը՝ (այդ թվում՝ 4 երիտասարդ) թեկնածուական ատենախոսություն: Հարկ է նշել, որ վերջին 4 ուստարիների ընթացքում թեկնածուական թեզ պաշտպանած 22 դասախոսներից 12-ը հիմնական աշխատողներ են, իսկ նրանցից 7-ը մասնաճյուղի շրջանավարտներ են: Մասնաճյուղն ունի 14 ասպիրանտ և հայցորդ:

Հաշվետու ուստարում մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակվել են 7 մենագրություն, 14 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկ, 113 գիտական հոդված:

Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները, մանկավարժական հմտությունները, դասավանդման որակը և արդյունավետությունը պարբերաբար գնահատվում են ԵՊՀ-ի կողմից իրականացվող ուսանողական հարցումների միջոցով, որոնց արդյունքներով մասնաճյուղի դասախոսների միջին միավորը հաշվետու ուստարվա 1-ին կիսամյակի տվյալներով կազմել է 4.66, որը նախորդ ուստարիների համեմատ բարելավվել է և բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.48-ից:

«Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» կրթագիտական ծրագրի շրջանակներում մասնաճյուղի դասախոսները շարունակում են հավաքել սահմանված կրեդիտները՝ մասնակցելով մասնաճյուղում մայր բուհի աջակցությամբ ու նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվող որակավորման բարձրացման դասընթացներին: Հաշվետու ուստարում մասնագիտական, մանկավարժական, համակարգչային և այլ ուղղություններով որակավորման բարձրացում են անցել 87 դասախոսներ:

Առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասախոսների մեծամասնությունը դասընթացները վարում է տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ:

Քանի որ մասնաճյուղը հիմնականում իրականացնում է բակալավրական կրթություն, ուստի հետազոտական նախագծեր, գիտահետազոտական ծրագրեր չեն իրականացվում, սակայն մասնաճյուղի դասախոսներն ակտիվ մասնակցում են հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, գիտական ծրագրերի: Հաշվետու ուստարում մասնաճյուղում կազմակերպվել են 3 գիտագործնական կոնֆերանսներ: Մասնաճյուղի դասախոսները մասնակցել են հանրապետական 12 և միջազգային 9 գիտաժողովների:

Մասնաճյուղի 3 դասախոսներ ընդգրկված են եղել տարբեր դրամաշնորհային ծրագրերում:

2014-15 ուստարում մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների կողմից ԵՊՀ ԻՄ-ում, Իջևանի քաղաքային պատկերասրահում, ԵՊՀ-ում, ՀՀ նկարիչների միությունում և Հայաստանի պետական պատկերասրահում կազմակերպվել են շուրջ 8 ցուցահենդեսներ՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյակին, Կանանց միջազգային տոնին, Գեղեցկության և մայրության տոնին, Հայրենական պատերազմի հաղթանակի 70-ամյակին, Կոմիտասի ծննդյան 145-ամյակին և այլն: Արդյունավետ ուսումնառության ապահովման նկատառումներով արդեն երկու տարի է ուսանողների համար կազմակերպվում են պլեներային նկարչության դասեր:

Տարբեր կազմակերպությունների և հիմնական գործատուների հետ իրականացվում են փոխշահավետ համագործակցային հանդիպումներ՝ ուսանողների արտադրական և մանկավարժական պրակտիկաներն առավել արդյունավետ իրականացնելու համար:

Ակտիվացվում և ընդլայնվում է մասնաճյուղի համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ՝ VivaCell MTS, Orange, ՀՕՖ և այլն:

Մասնաճյուղն իր հեղինակության ամրապնդման, հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով վարում է տեղեկատվության տարածման, գովազդային-լրատվական, քարոզչական համապատասխան քաղաքականություն: ԵՊՀ ԻՄ-ի բոլոր ստորաբաժանումների գործընթացների, իրադարձությունների, կազմակերպված միջոցառումների, հարցազրույցների, անհրաժեշտ հայտարարությունների, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորությունների լուսաբանումը, տեղեկատվության մատչելիությունն ապահովվում է մասնաճյուղի ինտերնետային կայքի /http://www.ijevan.ysu.am/, «Facebook» սոցիալական ցանցում գործող ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջի և խմբի միջոցով, նաև մասնաճյուղի մասին տեղեկատվություն ու նկարագրություններ են տպագրվում տարբեր տեղեկագրքերում, ժողովածուներում և կայքերում:

Մասնաճյուղի պաշտոնական կայքը պարբերաբար կատարելագործվում է: Այն այսօր ունի 165 էջ, տեղադրված է 1074 նյութ (478 հայտարարություն, 596 նորություն, որից 78-ը՝ իրադարձություն, 35-ը՝ գիտական կոնֆերանս, 35-ը՝ տնօրենության նիստ), 4521 ֆայլ, որոնցից 3035-ը նկարներ են: Հաշվետու ուստարում կայքում տեղադրվել է 387 նյութ, 1643 ֆայլ, ստեղծվել է 12 էջ: Հատկանշական են նորաստեղծ «Համալսարանականներ» էջը, որտեղ զետեղված են մասնաճյուղի աշխատակիցների կենսագրական տվյալները, «ԶԼՄ-ները մեր մասին» էջը, որտեղ տեղադրված են 2010 թվականից մինչ օրս մասնաճյուղի մասին տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված հոդվածներ ու

տեսանյութեր: Հաշվետու ուստարում 1-ին լրատվականով, Ա1+-ով, տեղական լրատվական ալիքներով լուսաբանվել են մի շարք իրադարձություններ՝ «Կայացավ «Սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» թեմայով միջբուհական հանրապետական գիտաժողովը» (2015թ. մայիսի 16), ԵՊՀ ԻՄ-ում գործող մասնագիտությունների վերաբերյալ տնօրեն Ս.Առաքելյանի տված հարցազրույցը (2015թ. մայիս), «Գրական-երաժշտական երեկո սահմանային զորամասում» (2014թ. նոյեմբերի 24), «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության առաջին կուրսի ուսանողների կազմակերպած միջոցառումը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին (2015թ. ապրիլի 25) և այլն:

Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում է անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, էլեկտրոնային պաշարների հարստացումը: Մասնաճյուղի գրադարանը հաշվետու ուստարում իր ֆոնդը հարստացրել է 2266 կտոր գրականությամբ: Համալրումը կատարվել է մասնաճյուղի կողմից գնման, տարբեր գրադարաններից փոխանցման, նվիրատվության միջոցով: Մայր բուհից մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր են փոխանցվել: Բառարաններ, մեծ պահանջարկ ունեցող գրականություն է նվիրաբերվել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գրադարանի, Պետեկամուտների կոմիտեի, ԱՄՆ-ի դեսպանատան տեղեկատվական ռեսուրս կենտրոնի, Ֆրանսիայի Լիոն քաղաքի «ԱԻՕ» կազմակերպության, Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի նախկին դասախոս Արամ Մինասյանի ընտանիքի անդամների և այլ կազմակերպությունների կողմից:

Մասնաճյուղում կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է շուրջ 60 դասախոսների կենցաղային խնդիրները, հանգստի ու հարմարավետ աշխատանքի պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Մասնաճյուղում ուսանողական և ուսումնագիտական միջավայրի ձևավորման ուղղությամբ իրենց ներդրումն ունեն ուսանողական համապատասխան կառույցները (ՈԻԽ, ՈԻԳԸ), որոնք կազմակերպում են տարբեր տոների, հիշատակների նվիրված բազմաթիվ միջոցառումներ, մասնակցում ԵՊՀ ուսանողական ձեռնարկումներին, մշակութային և սպորտային տարբեր միջոցառումների՝ դրևորելով լավ արդյունքներ: Հաշվետու ուստարում մասնաճյուղի մի շարք ուսանողներ ԵՊՀ ուսանողական խորհրդի կողմից արժանացել են պատվոգրերի:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2014-15 ուստարվա գործունեության մասին հաշվետվությունն ամփոփելով՝ նշենք, որ մասնաճյուղը մշտապես գտնվում է ԵՊՀ-ի ուշադրության կենտրոնում, նրա ամբողջ գործունեությունը, ձեռքբերումներն ու նվաճումները պայմանավորված են մայր բուհով:

ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս.Ա.Առաքելյան